ընծայեցաւ, թէ բնագիր լեզուաւն և թէ անգլիարէն թարգմանութեամբ, Եվետտս անուամբ (B. T. Evetts M. A.) գիտնականի համալսարանին Օքսֆրտի, ուր և տպագրեալ է, ճոխ ծանօթութեամբք, որ գրեթէ հեղինակին գրածէն աւելի են. և զորս շատ մասամբ տուած է գիտնագոյն մի, Բրոյեր Ալփրետ (Butler), հեղինակ հետաքննելի գրքի մի՝ Եգիպտական հին եկեղեցեաց վրայօք, (The ancient Coptic Churches of Egypt). ձեռնտու եղած է մասամբ և բազմահմուտ հայագէտ, և քանի մի տարիէ ի վեր ծանօթ մեր ազգային բանասիրաց և ասոնց օրագրաց մէջ՝ Կոնիբիեր (F. Fr. Conybeare), որ և զուարթառատ ազնուութեամբ ընծայեց մեզ օրինակ մի Աբուսահլի թանկ և հետաքրքրական գրոց. որոյ համար կարեւոր պարտք համարիմք հրապարակել հոս մեր շնորհակալութիւնը։

Գալով առ հեղինակն, զոր ըստ մեր մատենագրաց և ազգային սովորութեան՝ Աբուսահլ անուանեմք (փոխանակ Սալիհ ըսելու), ով և որոյ որդի և ե՞րբ յԵգիպտոս եկած ըլլալն՝ չի յիշուիր. որովհետեւ, ըստ վերոյգրելոցս, գրքին սկիզբն պակաս ըլլալով՝ իր վրայօք ըսածն այլ (եթէ ըսած էր) պակսի. բայց իր պատմու-